առևտրի կազմակերպման նկատառումներով:

4. Այս սովորույթը դիտվել է Հայաստանում արհեստների պատմական զարգացման ամբողջ ընթացքում լայն աշխարհագրությամբ /Անդրկովկաս, Հյուսիսային Կովկաս, Ղրիմ, Ռուսաստան, Լեհաստան, Փոքր Ասիա, Հունաստան, Արևմտյան Եվրոպա և այլուր/: Նման տեղաշարժեր առավել շատ են եղել XIX դ. /Կարին-Ախալցխա, Ախալցխա-Գումրի, Ալեքսանդրապոլ-Կարս, Երևան, Ալեքսանդրապոլ-Անդրկովկաս, Թուրքիա և այլուր/: Հայ արհեստավորների տեղաշարժերին, տարբերություն այլ էթնիկ արհեստավորների, հատուկ է եղել հենց հաճախակությունը, կազմակերպվածությունը և խմբայնությունը, երբեմն նաև վերատեղափոխություն՝ իբրև հետևանք պատմա-քաղաքական երերուն իրավիճակի, արհեստների բարձր զարգացածության, կապիտալիզմի դանդաղ ներթափանցման պայմաններում դրանց կենսականության և հարմարվելու ճկունության, տեղի ու հարևան երկրների բնակչության կենցաղային պահանջմունքների բավարարման հմտության և այլն: Այդ կարգի տեղաշարժերից բնորոշ է Էրզրումցի արհեստավորների կազմակերպված գաղթը Ախալցխա, իսկ հետագայում, 1839 թ., որոշակի հանգամանքների բերումով, մի մասի վերատեղաշարժը Գումրի-Ալեքսանդրապոլ, ուր նրանք հաստատում են 100-ից ավելի արհեստ, որոնք կարևոր նշանակություն են ունենում քաղաքի արտադրական, հասարակական կենցաղի ձևավորման գործում: Նման տեղաշարժեր դիտվել են XIX դ. ամբողջ ընթացքում, տարբեր ձևերով նաև XX դ. սկզբներին:

5. Պետք է նշել, որ Հայաստանում սովետական իշխանության սկզբնական տարիներին /1920-1930-ական թթ./ նույնպես դիտվել են արհեստավորների, բանվոր-մասնագետների տեղափոխություններ, առավելապես կապված գյուղատնտեսության զարգացման, կոլեկտիվացման, ամենուր ծավալված շինարարության հետ, սակայն այս տեղաշարժերը բնույթով արդեն այլ էին: Այնուամենայնիվ, ցայսօր էլ նշմարելի են հիշյալ սովորույթի արտահայտություններ, անձնական նախաձեռնությամբ առանձին բանվոր-արհեստավորների բրիգադների սեզոնային կամ մշտական տեղափոխություններ Հայաստանից դուրս հեռու կամ մոտ կառույցները, որոնց հետևանքները միշտ չէ, որ օգտակար են ու խրախուսելի:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱՋԼՅԱՆ

ԲՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԱՅԻՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐՈՒՄ

1. Ժողովրդական խաղիկների թեմատիկ վերլուծությունը ինչպես

այնդյալում, նույնպես և ներկայում եղել և մնում է հայ բանագիտության կարևոր խնդիրներից:

2. ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնում վերջին շրջանում, ելակետ ունենալով բանակային վերլուծության մեթոդը, մշակվել են 600 խաղիկի առանցքային վարկածները: Մեր նպատակն է եղել ընկալության ենթարկել այդ խաղիկներում առկա շրջապատող բնության այս կամ այն տարրը: Սույն մեթոդը հանգեցրել է որակական բնութագրման, բացահայտել ներքին օրինաչափությունները:

3. Բնությունը հայ ժողովրդական խաղիկներում ներկայանում է բազմատեսակ տարրերով, որոնք ստեղծում են վիպական յուրահատուկ բնանկար՝ կախված ես-ի և ոչ ես-ի հարաբերակցությունից:

4. Բանաձևային արտահայտություններն արդյունք են խաղիկի ստեղծման, կենցաղավարման, դրանում արտահայտված հուզական տրամադրության և այլ հանգամանքների:

5. Քանակական վերլուծության մեթոդով ուսումնասիրելով փոխառնչակցումը շրջապատող բնության հետ, հնարավոր է դառնում առավել հրատակորեն լուսաբանելու խաղիկների երգարվեստի բնագավառում իրականության արտացոլման, տեղայնացման, տարբերակայնության և, վերջապես, տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի ու փոխազդեցությունների հարցերը:

ԼԻԼՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆԸ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ԱՐԴԻ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ

/Ըստ Երևան քաղաքի
էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի/

1. Հայերի ընտանեա-ամուսնական հարաբերություններում կարևոր տեղ է գրավում ամուսնություն կնքելու հիմնական նախապայմաններից մեկի՝ ծնողական համաձայնության անհրաժեշտության, պարտադրության հարցը:

2. Երևանի հարսանեկան արարողակարգի արդի վիճակի հետազոտությունը ցույց է տալիս, որ նշված հարցադրման նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունքը ներկայում զգալիորեն որոշում է բուն իսկ հարսանիքի համապատասխան ձևը՝ արվում է այն ավանդութային, թե՞ ժամանակակից ծիսակարգով:

3. Ամուսնությանը ծնողական համաձայնության անհրաժեշտության